Հաստատված է
«Հայաստանի պետական տնտեսագիտական
համալսարան» պետական ոչ առևտրային
կազմակերպության գիտական խորհրդի
2023 թվականի փետրվարի 28-ի N 5 - 4 որոշմամբ,
գիտական խորհրդի նախագահ, ռեկտոր

________________ Դ. Ռ. Գալոյան

28 փետրվարի 2023 թ.

**ԿԱՐԳ**
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ, ՀԱՅՑՈՐԴՈՒԹՅԱՆ ՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ**

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգի նպատակը Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի (այսուհետ՝ համալսարան) հետբուհական կրթության երրորդ աստիճանի կրթական ծրագրերով ուսումնառող ասպիրանտների ընդունելության, ուսումնառության, գիտելիքների գնահատման գործընթացներում համալսարանի և ասպիրանտների, ինչպես նաև հայցորդության ձևակերպման, հայցորդների հետազոտական գործունեության կազմակերպման և հայցորդների հետ համալսարանի հարաբերությունների կանոնակարգումն է, վարչարարության միասնական համակարգի սահմանումը:

2. Սույն կարգով չկանոնակարգված հետբուհական կրթության երրորդ աստիճանի կրթական ծրագրով իրականացվող գործառույթները կարող են կանոնակարգվել նաև համալսարանի ռեկտորատի և գիտական խորհրդի կողմից ընդունված առանձին որոշումներով:

## 2. ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

3. Համալսարանի ասպիրանտուրա մրցութային հիմունքներով կարող են ընդունվել մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի կրթական աստիճան ունեցող անձինք:

4. Ասպիրանտուրայում ընդունելությունն իրականացվում է առկա և հեռակա ձևերով, անվճար և վճարովի հիմունքներով: Անվճար հիմունքներով ընդունելությունը համալսարանի ասպիրանտուրայում իրականացվում է առկա և հեռակա ուսուցման ձևերում՝ պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (այսուհետ՝ անվճար) տեղերի շրջանակներում և Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված ժամկետներում:

5. Վճարովի հիմունքներով ընդունելությունը համալսարանի ասպիրանտուրայում իրականացվում է առկա և հեռակա ուսուցման ձևերում՝ պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցմամբ (այսուհետ՝ վճարովի) տեղերի շրջանակներում և Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված ժամկետներում:

6. Ասպիրանտուրայի ընդունելության կազմակերպման համար համալսարանի ռեկտորի հրամանով ստեղծվում է ընդունող հանձնաժողով՝ ռեկտորի կամ գիտության գծով պրոռեկտորի նախագահությամբ և ասպիրանտուրայի բաժնի պետի քարտուղարությամբ: Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են մասնագիտական բոլոր ամբիոնների վարիչները:

7. Համալսարանի ասպիրանտուրա ընդունվելու համար դիմորդը կամ նրա կողմից լիազորված անձը պետք է ներկայացնի դիմում համալսարանի ռեկտորի անունով՝ կցելով հետևյալ փաստաթղթերի ցանկը.

1) բակալավրի և մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի դիպլոմի ու դրանց հավելվածների պատճենները (օտարերկրյա պետություններում բարձրագույն կրթություն ստացածների համար՝ փաստաթուղթ նրանց կրթության համարժեքության մասին).

2) օտար լեզվի ատեստավորման վկայականը կամ դրան համապատասխան տեղեկանքը (սահմանված ներքին շեմով՝ բալային գնահատմամբ).

3) ընտրված մասնագիտությամբ հրատարակված առնվազն մեկ գիտական աշխատանքի պատճենը կամ գիտական ռեֆերատ՝ առնվազն 20 տպագրական էջի սահմաններում.

4) ինքնակենսագրություն և երեք լուսանկար (3 x 4 չափսի).

5) քաղվածք աշխատանքային գրքույկից (առկայության դեպքում):

Դիմումներն ընդունվում են ասպիրանտուրայի բաժնում: Դիմումի ձևը, հրատարակված գիտական աշխատանքի (աշխատանքների) ցուցակը, գիտական ռեֆերատի տիտղոսաթերթն ու ռեֆերատի կատարման պահանջները ներկայացված են սույն կարգի N 1, N 2, N 3 և N 4 հավելվածներում:

8. Գիտական ռեֆերատը պետք է ներկայացվի ընտրված մասնագիտությամբ, սույն կարգի N 4 հավելվածով սահմանված պահանջներին համապատասխան, որն ուղարկվում է համապատասխան մասնագիտական ամբիոն գրախոսման:

9. Սույն կարգի N 4 հավելվածով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում գիտական ռեֆերատը չի ընդունվում:

10. Ասպիրանտուրայի ընդունելության մասնագիտական քննության անցկացման համար համալսարանի ռեկտորի հրամանով ստեղծվում են մասնագիտական քննական հանձնաժողովներ, որոնց կազմում ընդգրկվում են տվյալ մասնագիտական բնագավառի գիտական աստիճան կամ գիտական կոչում ունեցող երեքից հինգ մասնագետ:

11. Ասպիրանտուրայի ընդունելության մասնագիտական քննությանը մասնակցելու թույլտվությունը դիմորդներին տալիս է համալսարանի ասպիրանտուրայի ընդունող հանձնաժողովը՝ օտար լեզվից ստացած համապատասխան միավորը հավաստող վկայականի և (կամ) տեղեկանքի առկայության, ինչպես նաև ընտրված մասնագիտությանը համապատասխան գիտական ռեֆերատի մասին մասնագիտական ամբիոնի գրավոր դրական գրախոսականի կամ Հայաստանի Հանրապետության բարձրագույն որակավորման կոմիտեի (այսուհետ՝ ՀՀ ԲՈԿ) կողմից ընդունելի գրախոսվող գիտական ամսագրերում հրատարակված գիտական աշխատանքի (աշխատանքների) ներկայացման հիման վրա:

12. Հրատարակված գիտական աշխատանքի (աշխատանքների) ցուցակում անհրաժեշտ է ներառել միայն ՀՀ ԲՈԿ-ի կողմից ընդունելի գրախոսվող պարբերականներում հրապարակումները. այլ հրապարակումները համալսարանի կողմից չեն դիտարկվում և չեն կարող հիմք հանդիսանալ ասպիրանտուրայի ընդունելության քննությանը մասնակցելու համար:

13. Ասպիրանտուրայի ընդունելության քննության արդյունքներով բոլոր կրթաձևերում ընդունված ասպիրանտների հրամանագրումը կատարվում է համալսարանի ռեկտորի հրամանով, որից հետո ասպիրանտի հետ կնքվում է համապատասխան պայմանագիր (ասպիրանտների հետ կնքվող պայմանագրի ձևը ներկայացված է սույն կարգի N 9 հավելվածում):

14. Ասպիրանտուրայում առկա ձևով ուսուցման տևողությունը չի կարող գերազանցել 3 տարին, իսկ հեռակա ձևով ուսուցման տևողությունը՝ 4 տարին:

15. Առկա ուսուցման ասպիրանտուրայում ուսանելու ժամանակը համարվում է գիտամանկավարժական ստաժ:

16. Համալսարանը պարտավոր է պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) սովորող ասպիրանտին (մասնագետին) ուսումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում տեղավորել աշխատանքի համապատասխան մասնագիտությամբ՝ հետազոտողի, դասախոսի (կամ ասիստենտի) պաշտոնում:

17. Սույն կարգի 16-րդ կետի պահանջները չեն տարածվում վճարովի ուսուցման ասպիրանտուրայում սովորողների, հայցորդների և ատենախոսությունը սահմանված ժամկետում չպաշտպանած մասնագետների վրա:

18. Պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) ուսումնառած և ավարտած ասպիրանտը/մասնագետը պարտավոր է առնվազն 3 տարի աշխատել համալսարանում, իսկ աշխատանքից հրաժարվելու դեպքում պարտավոր է համալսարանին փոխհատուցել ուսումնառության տարիների ընթացքում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իր ուսումնառության հետ կապված ծախսերը:

19. Պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) սովորող ասպիրանտները ստանում են պետական կրթաթոշակ:

20. Առկա ուսուցման ասպիրանտին ուսման ընթացքում յուրաքանչյուր տարում տրվում է երկամսյա արձակուրդ՝ կրթաթոշակի պահպանմամբ:

## 3. ՀԱՅՑՈՐԴՈՒԹՅԱՆ ՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

21. Համալսարանում հայցորդություն կարող են ձևակերպել մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի կրթական աստիճան ունեցող անձանց:

22. Հայցորդության ձևակերպումը համալսարանում իրականացվում է տարվա ընթացքում 2 անգամ՝ աշնանն ու գարնանը:

23. Հայցորդության ձևակերպման համար փաստաթղթերի ընդունելությունը կատարվում է համալսարանի ռեկտորի հրամանով: Հայցորդության փաստաթղթերի ընդունելու վերաբերյալ համալսարանի պաշտոնական կայքէջում տրվում է հայտարարություն:

24. Համալսարանում հայցորդության ձևակերպման համար դիմորդի կամ նրա կողմից լիազորված անձի կողմից անհրաժեշտ է ներկայացնել դիմում համալսարանի ռեկտորի անունով՝ կցելով հետևյալ փաստաթղթերը.

1) մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի դիպլոմի և դրա հավելվածի պատճենները (օտարերկրյա պետություններում բարձրագույն կրթություն ստացածների համար՝ փաստաթուղթ նրանց կրթության համարժեքության մասին).

2) հրատարակված գիտական աշխատանքների ցուցակը կամ ընտրած մասնագիտությունից գիտական ռեֆերատ.

3) ինքնակենսագրություն և երեք լուսանկար (3 x 4 չափսի).

4) քաղվածք աշխատանքային գրքույկից (եթե դիմողն աշխատում է):

5) Դիմումներն ընդունվում են ասպիրանտուրայի բաժնում: Դիմումի ձևը, հրատարակված գիտական աշխատանքի (աշխատանքների) ցուցակը, գիտական

ռեֆերատի տիտղոսաթերթն ու ռեֆերատի կատարման պահանջները ներկայացված են սույն կարգի N 1, N 2, N 3 և N 4 հավելվածներում:

25. Հրատարակված գիտական աշխատանքի (աշխատանքների) ցուցակում անհրաժեշտ է ներառել միայն ՀՀ ԲՈԿ-ի կողմից ընդունելի գրախոսվող պարբերականներում հրապարակումները. այլ հրապարակումները համալսարանի կողմից չեն դիտարկվում և չեն կարող հիմք հանդիսանալ հայցորդության ձևակերպման համար:

26. Գիտական ռեֆերատը պետք է ներկայացվի ընտրված մասնագիտությամբ, սույն կարգի N 4 հավելվածով սահմանված պահանջներին համապատասխան, որն ուղարկվում է համապատասխան մասնագիտական ամբիոն գրախոսման:

27. Սույն կարգի N 4 հավելվածով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում գիտական ռեֆերատը չի ընդունվում:

28. Գիտական ռեֆերատի մասին մասնագիտական ամբիոնի գրավոր դրական գրախոսականի կամ ՀՀ ԲՈԿ-ի կողմից ընդունելի գիտական ամսագրերում հրատարակված գիտական աշխատանքի (աշխատանքների) ներկայացման հիման վրա, համալսարանի գիտական խորհրդի կողմից ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատումից հետո, համալսարանի ռեկտորի հրամանով հայցորդը հրամանագրվում է և վերջինիս հետ կնքվում է համապատասխան պայմանագիր (հայցորդների հետ կնքվող պայմանագրի ձևը ներկայացված է սույն կարգի N 10 հավելվածում):

29. Համալսարանում հայցորդությունն իրականացվում է վճարովի հիմունքներով, առավելագույնը 5 տարի տևողությամբ:

## 4. ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅՈՒՄ ԵՎ ՀԱՅՑՈՐԴՈՒԹՅՈՒՆՈՒՄ: ԿՐԹԱԿԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ

30. Համալսարանում ասպիրանտի ուսումնառությունն ու հայցորդի հայցորդությունը ենթադրում է, որ վերջինս.

1) պետք է ունենա համալսարանի գիտական խորհրդի կողմից հաստատված ատենախոսության թեմա և գիտական ղեկավար.

2) պետք է ունենա համալսարանի գիտական խորհրդի կողմից հաստատված անհատական աշխատանքային պլան, ուսումնառության ընթացքում 36 ժամ գիտամանկավարժական կամ հետազոտական բեռնվածություն.

3) պետք է մասնակցի ուսումնական ծրագրով (անհատական աշխատանքային պլանով) նախատեսված դասընթացներին և հանձնի քննություններն ու ստուգարքները, կուտակի համապատասխան կրեդիտները և համապատասխան ամբիոնում անցկացնի ատենախոսության նախնական քննարկում.

4) յուրաքանչյուր ուսումնական տարվա ընթացքում համապատասխան մասնագիտական ամբիոնում պետք է անցնի պարտադիր ատեստավորում, որը հաստատվում է ֆակուլտետի գիտական խորհրդում:

31. Ատենախոսության թեման և գիտական ղեկավարի թեկնածությունը քննարկվում և երաշխավորվում է ամբիոնի նիստում, այնուհետև՝ ֆակուլտետի գիտական խորհրդում, որից հետո՝ համալսարանի գիտական խորհրդին կից գիտամեթոդական հանձնաժողովի նիստում և հաստատվում համալսարանի գիտական խորհրդի կողմից: Ատենախոսության թեմայի կամ գիտական ղեկավարի փոփոխությունն իրականացվում է նույն ընթացակարգով:

32. Գիտական ղեկավար կարող են նշանակվել տվյալ բնագավառի գիտության դոկտորները և այն թեկնածուները, որոնք տվյալ թվանիշով ստացել են ՀՀ ԲՈԿ-ի կողմից ատենախոսություն ղեկավարելու թույլտվություն: Գիտական ղեկավարի թեկնածությունը որոշվում է ասպիրանտի/հայցորդի և գիտական ղեկավարի փոխադարձ համաձայնությամբ:

33. Ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման վերաբերյալ որոշման մասին համալսարանը տեղեկացնում է ՀՀ ԲՈԿ-ին:

34. Համալսարանում ասպիրանտների ուսումնառությունն ու հայցորդների հայցորդությունն իրականացվում է կրեդիտային համակարգով:

35. Ասպիրանտուրայում ուսուցման և հայցորդության լրիվ բեռնվածությունը համարժեք է 180 ԵԿՓՀ կրեդիտի, որը բաղկացած է երկու փոխկապակցված մասերից՝ կրթական և հետազոտական: Ծրագրի 50 կրեդիտը նախատեսված է կրթական բաղադրիչի, իսկ 130 կրեդիտը՝ հետազոտական բաղադրիչի համար: Կրթական բաղադրիչը ենթադրում է պարտադիր դասընթացներ և քննություններ՝ 30 կրեդիտ

ընդհանուր ծավալով և ընտրովի դասընթացներ ու ստուգարքներ՝ 20 կրեդիտ ընդհանուր ծավալով:

ԵԿՓՀ մեկ կրեդիտը համարժեք է ասպիրանտի 30 ժամ լրիվ (լսարանային, արտալսարանային և ինքնուրույն) ուսումնական բեռնվածությանը:

36. Կրթական բաղադրիչի պարտադիր դասընթացներ և քննություններ բաժինը ներառում է.

1) մասնագիտական որակավորման քննություն ատենախոսության թեմայի թվանիշով՝ 8 կրեդիտ.

2) գիտական հետազոտության մեթոդաբանություն (32 ժամ)՝ 4 կրեդիտ.

3) մասնագիտական օտար լեզու (32 ժամ)՝ 4 կրեդիտ.

4) տեղեկատվական և կրթական նոր տեխնոլոգիաներ (32 ժամ)՝ 4 կրեդիտ.

5) գիտահետազոտական փորձառություն՝ 10 կրեդիտ:

37. Կրթական բաղադրիչի ընտրովի դասընթացներ և ստուգարքներ բաժինը ընդհանուր ուսումնառության ընթացքում նախատեսում է ընդամենը 6 դասընթաց (յուրաքանչյուր կիսամյակում առավելագույնը 3 դասընթաց)՝ յուրաքանչյուրը 16 ժամ ընդհանուր ժամաքանակով և գումարային 20 կրեդիտ ծավալով: Դասընթացների ընտրություն ասպիրանտը/հայցորդը կատարում է յուրաքանչյուր դասընթացի ուսումնառությանը նախորդող կիսամյակում:

38. Ընտրովի 6 դասընթացներից 3-ը մասնագիտական են, սահմանվում են համապատասխան ամբիոնի կրթական ծրագրով և առաջադրվում համապատասխան մասնագիտական ամբիոնի կողմից միայն տվյալ ամբիոնի ասպիրանտներին և հայցորդներին (յուրաքանչյուրը 3-ական կրեդիտ), իսկ մյուս 3-ը համալսարանական դասընթացներ են և առաջադրվում են համալսարանի բոլոր ասպիրանտներին և հայցորդներին. 2-ը՝ 4 կրեդիտ, մեկը՝ 3 կրեդիտ:

39. Ընտրովի դասընթացներից յուրաքանչյուրի ընտրության համար ասպիրանտին և (կամ) հայցորդին պետք է առաջարկվի առնվազն 2 դասընթաց: Համալսարանական և մասնագիտական ընտրովի դասընթացների ցանկը ըստ մասնագիտությունների ներկայացված է սույն կարգի N 8 հավելվածում:

40. Մասնագիտական դասընթացները համարվում են ընտրված մեկ ասպիրանտի կողմից այն ընտրելու դեպքում, իսկ հանալսարանական դասընթացները համարվում են

ընտրված առնվազն 5 ասպիրանտի և (կամ) հայցորդի կողմից ընտրելու դեպքում: Մինչև 5 ասպիրանտների կամ հայցորդների կողմից ընտրված դասընթացները ընտրված չեն համարվում և տվյալ դասընթացն ընտրածները մեխանիկորեն միացվում են ընտրված դասընթացների խմբերին:

41. Դասընթացի ընտրության գործընթացը կազմակերպում է ասպիրանտուրայի բաժինը:

42. Դասընթացների ընտրությունից առաջ կազմակերպվում է ասպիրանտների և հայցորդների առնվազն մեկ հանդիպում ընտրովի դասընթացները սպասարկող ամբիոնի դասավանդող դասախոսի (դասախոսների) հետ, որի ընթացքում վերջիններս ներկայացնում են դասընթացի ծրագիրը, դասավանդման սկզբունքները և ակնկալվող վերջնարդյունքները:

43. Ասպիրանտները և հայցորդները ուսումնական պլանի կրթական բաղադրիչի սահմանված կրեդիտները վաստակում են դասընթացի վերջնարդյունքները հաջողությամբ յուրացնելու և գնահատականի դրական շեմ ապահովելու դեպքում:

44. Կրթական ծրագրի հետազոտական բաղադրիչով պայմանավորված կրեդիտները ասպիրանտները և հայցորդները վաստակում են հետազոտական գործունեության հիման վրա, որը ներառում է.

1) «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 10-րդ կետով սահմանված պահանջներով և նվազագույն քանակով ատենախոսության թեմայի շրջանակներում հրապարակումներ՝ 30 կրեդիտ.

2) տարեկան ատեստավորումներ՝ 20 կրեդիտ.

3) ատենախոսություն և վերջինիս վերաբերյալ համապատասխան ամբիոնի դրական եզրակացությունը՝ 80 կրեդիտ:

45. Կրթական բաղադրիչի դասընթացները, հետազոտական բոլոր բաղադրիչները և դրանցով պայմանավորված կրեդիտների հանրագումարը (180 ԵԿՓՀ կրեդիտ), ինչպես նաև ըստ առանձին տարիների կրեդիտների բաշխվածքը, այդ թվում ընտրովի դասընթացներից, արտացոլվում է համալսարանի գիտական խորհրդի կողմից հաստատված ասպիրանտի կամ հայցորդի անհատական աշխատանքային պլանում:

46. Ուսումնական տարին կամ ուսումնառության լրիվ ծրագիրը հաջողությամբ ավարտելու համար ասպիրանտը և հայցորդը պետք է վաստակեն անհատական աշխատանքային պլանով սահմանված կրեդիտների անհրաժեշտ քանակը:

47. Ասպիրանտի և հայցորդի անհատական աշխատանքային պլանով նախատեսված դասընթացները կազմակերպվում են անցանց կամ առցանց եղանակով՝ (ասպիրանտների և հայցորդների, նրանց խմբի և դասավանդող դասախոսի համաձայնությամբ)՝ ըստ հաստատված գրաֆիկի:

## 5. ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՆ ՈՒ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

48. Համալսարանի ասպիրանտներն ու հայցորդները պետք է հանձնեն մասնագիտական որակավորման քննություն ՀՀ ԲՈԿ-ի կողմից հաստատված ծրագրով և հարցաշարով:

49. Մասնագիտական որակավորման քննությանը դասընթաց չի նախորդում:

50. Մասնագիտական որակավորման քննության հարցաշարը կազմվում է մասնագիտական ամբիոնների կողմից և չի կարող նույնությամբ կրկնել ասպիրանտուրայի ընդունելության մասնագիտական քննության հարցաշարը, որի պատասխանատուն մասնագիտական ամբիոնն է:

51. Քննությունը կազմակերպվում է 2 քննաշրջանով. գարնանային՝ ապրիլ-հունիս ամիսներին և աշնանային՝ հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին:

52. Մասնագիտական որակավորման քննությունների կազմակերպման համար համալսարանի ռեկտորի առաջարկությամբ ՀՀ ԲՈԿ-ի նախագահի հրամանով բոլոր թվանիշներով մասնագիտությունների համար ձևավորվում են քննական հանձնաժողովներ: Հանձնաժողովների կազմում ընդգրկվում են տվյալ մասնագիտական ամբիոնի գիտական աստիճան և (կամ) գիտական կոչում ունեցող երեքից հինգ մասնագետ՝ նախագահ (գիտության դոկտոր) և երկուսից չորս անդամներ:

53. Մասնագիտական որակավորման քննության անցկացման ժամանակացույցը հաստատում է համալսարանի ռեկտորը և տեղեկացնում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը:

54. Համալսարանի պաշտոնական կայքէջում տեղադրվում է մասնագիտական քննության վերաբերյալ հետևյալ տեղեկատվությունը.

1) հարցաշարը՝ մասնագիտական քննությունից առնվազն մեկ ամիս առաջ.

2) անցկացման օրվա, տեղի և ժամի վերաբերյալ տեղեկատվությունը՝ քննությունն սկսելուց յոթ աշխատանքային օր առաջ.

3) ընթացակարգային պահանջները, որոնք հաստատվում են համալսարանի ռեկտորի կողմից:

55. Մասնագիտական որակավորման քննությունը կազմակերպվում է համալսարանում անցանց եղանակով, իսկ քննության անցկացման ձևը՝ բանավոր:

56. Մասնագիտական որակավորման քննությանը մասնակցելու համար ասպիրանտներն ու հայցորդները դիմում են ներկայացնում համալսարանի ռեկտորին քննաշրջանից մեկ ամիս առաջ: Դիմումներն ընդունվում են ասպիրանտուրայի բաժնում կամ info@asue.am էլեկտրոնային հասցեով: Դիմումի ձևը ներկայացված է սույն կարգի N 5 հավելվածում:

57. Մասնագիտական որակավորման քննությունը հանձնվում է այն ամբիոնի մասնագիտական առարկայից, որով հաստատվել է ատենախոսության թեման: Այն դեպքում, երբ ասպիրանտը կամ հայցորդը չունի բարձրագույն տնտեսագիտական կրթություն, պետք է հանձնի լրացուցիչ քննություն ընդհանուր տնտեսագիտությունից:

58. Մասնագիտական որակավորման քննությունը գնահատվում է 4 միավորային համակարգով՝ «գերազանց», «լավ», «բավարար» և «անբավարար»: Քննությունը համարվում է հանձնված «գերազանց» կամ «լավ» գնահատականի դեպքում: Արձանագրությունը ստորագրում են քննական հանձնաժողովի նախագահը և անդամները: Արձանագրությունը պահպանվում է ասպիրանտուրայի բաժնում, որը և տալիս է տեղեկանք քննության հանձնման մասին:

59. Մասնագիտական որակավորման քննությունը չհանձնելու դեպքում ասպիրանտը կամ հայցորդը կարող է այն հանձնել հաջորդ քննաշրջանում:

60. Կրթական ծրագրի պարտադիր և ընտրովի դասընթացների քննություններն ու ստուգարքները կազմակերպվում են նույն կիսամյակում տվյալ դասընթացի ավարտից հետո, մեկամսյա ժամկետում, բացառությամբ սույն կարգի 63-րդ կետով նախատեսված դեպքերի:

61. Քննությունը/ստուգարքը կազմակերպվում է համալսարանում անցանց եղանակով: Իսկ քննության անցկացման ձևը (գրավոր կամ բանավոր) և գնահատման գործոնները սահմանում է ամբիոնը՝ քննարկելով և հաստատելով այն ամբիոնի նիստում յուրաքանչյուր դասընթացի համար:

62. Դասախոսը դասընթացը սկսելիս պարտավոր է ասպիրանտներին և հայցորդներին ներկայացնել տվյալ դասընթացի առարկայական ծրագիրը, հարցաշարը, գնահատման չափանիշները և գիտելիքների ստուգման ձևը:

63. Ասպիրանտի և հայցորդի անհատական աշխատանքային պլանի պարտադիր (բացառությամբ մասնագիտական որակավորման քննության) և ընտրովի դասընթացների քննությունների ու ստուգարքների վերահանձնում չի թույլատրվում, բացառությամբ ասպիրանտի կամ հայցորդի առողջական խնդիրներով և այլ անհաղթահարելի գործոնների (ֆորս մաժոր) պատճառով պայմանավորված քննությանը/ստուգարքին չմասնակցելու դեպքերի, հիմնավորող փաստաթղթերի առկայության պայմաններում, որի դեպքում նրան իրավունք է տրվում հանձնելու քննությունը/ստուգարքը անհատական ժամանակացույցով:

64. Պարտադիր և ընտրովի դասընթացների գնահատման համար (բացառությամբ մասնագիտական որակավորման քննության) կիրառվում է գնահատման 100 միավորային համակարգ: Քննությունը/ստուգարքը համարվում է հանձնված 60 և բարձր միավորի դեպքում: Գնահատման սանդղակը ներկայացված է սույն կարգի N 6 հավելվածում:

65. Ասպիրանտների և հայցորդների գիտելիքի ստուգում իրականացվում է նաև կրթական ծրագրի գիտահետազոտական փորձառություն բաղադրիչի մասով՝ փորձառության հաշվետվության պաշտպանության միջոցով: Փորձառության տևողությունը 8 շաբաթ է:

66. Համալսարանի ասպիրանտների և հայցորդների գիտահետազոտական փորձառությունը կազմակերպվում է համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնում:

67. Յուրաքանչյուր ասպիրանտի և հայցորդի համար փորձառության վայրում նշանակվում է փորձառության ղեկավար:

68. Փորձառության ծրագիրը, որով առաջնորդվում են ասպիրանտներն ու հայցորդները, հաստատվում է գիտության գծով պրոռեկտորի կողմից:

69. Փորձառության հաշվետվության պաշտպանությունը տեղի է ունենում «Ամբերդ» հետազոտական կենտրոնում: Փորձառության պաշտպանության համար ձևավորվում է հանձնաժողով, որի կազմում ընդգրկվում են ասպիրանտի կամ հայցորդի գիտական ղեկավարը, փորձառության վայրի ղեկավարը և «Ամբերդ» հետազոտական կենտրոնի տնօրենը, որն ի պաշտոնե հանձնաժողովի նախագահն է:

70. Փորձառության գնահատումն իրականացվում է 100 միավորային համակարգով:

71. Փորձառության գնահատականը գրանցվում է սույն կարգի N 7 հավելվածով սահմանված ձևանմուշով փորձառության ամփոփաթերթում:

72. Փորձառությունը համարվում է չհանձնված, եթե ասպիրանտը կամ հայցորդը չի ներկայացրել հաշվետվություն կամ չի ներկայացել փորձառության հաշվետվության պաշտպանությանը կամ փորձառության գնահատականը փոքր է 60-ից:

73. Փորձառության պաշտպանությունը կազմակերպվում է մեկ անգամ և վերահանձնում չի կազմակերպվում:

74. Հաշվետվությունը չպաշտպանելու դեպքում փորձառությունը գնահատվում է անբավարար:

75. Վեցամսյա մասնագիտական աշխատանքային ստաժ ունեցող ասպիրանտն իր ցանկությամբ կարող է չմասնակցել փորձառությանը և կրեդիտները կուտակել՝ ներկայացնելով համապատասխան տեղեկանք աշխատանքի վայրից:

76. Տարվա ընթացքում հանձնած քննությունների և ստուգարքների, գիտահետազոտական փորձառության, մասնագիտական որակավորման քննության, հրապարակված հոդվածների և ատենախոսության վրա կատարված աշխատանքի արդյունքներով ձևավորվում է ասպիրանտի և հայցորդի ատեստավորման վերջնական կրեդիտային պատկերը:

## 6. ԱՍՊԻՐԱՆՏԻ/ՀԱՅՑՈՐԴԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄԸ

77. Ասպիրանտները և հայցորդները յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին գիտական ղեկավարի հետ ամբիոն են ներկայացնում հաշվետվություն, որի հիման վրա պարտադիր ատեստավորում են անցնում ամբիոնի կողմից:

78. Տարեկան ատեստավորման համար ասպիրանտներն ու հայցորդները յուրաքանչյուր ուսումնական տարում պետք է կուտակեն անհատական աշխատանքային պլանի կրթական և հետազոտական բաղադրիչներով նախատեսված տարեկան կրեդիտների անհրաժեշտ նվազագույն քանակը:

79. Ամբիոնի կողմից ասպիրանտների և հայցորդների ատեստավորումը հաստատվում է համապատասխան ֆակուլտետի գիտական խորհրդի նիստում և աշխատանքային պլանի յուրաքանչյուր տարվա կատարողականը գիտական ղեկավարի ստորագրությամբ վավերացվում է ֆակուլտետի դեկանի կողմից:

80. Ատեստավորում չանցած ասպիրանտը կամ հայցորդը հեռացվում է համալսարանից՝ ռեկտորի հրամանով:

81. Ատեստավորում չանցնելու հիմքերն են.

1) ասպիրանտի կամ հայցորդի անհատական պլանով նախատեսված անհրաժեշտ կրեդիտները մեկ ուսումնական տարվա ընթացքում չհավաքելը.

2) ուսումնառության վերջին կիսամյակում մասնագիտական քննությունից բացասական գնահատական (բավարար կամ անբավարար) ստանալը կամ քննությանը չներկայանալը, բացառությամբ առողջական խնդիրներով և այլ անհաղթահարելի գործոնների (ֆորս մաժոր) պատճառով պայմանավորված նշված կիսամյակում քննությանը չմասնակցելու դեպքերի՝ հիմնավորող փաստաթղթերի առկայության դեպքում.

3) կրթական ծրագրի մյուս դասընթացների (պարտադիր և ընտրովի) քննություններին ու ստուգարքներին բացասական գնահատական ստանալը, ինչպես նաև սույն կարգի 63-րդ կետով նախատեսված դեպքերից բացի՝ քննությանը չներկայանալը.

4) հետազոտական փորձառությանը չմասնակցելը կամ հաշվետվություն չներկայացնելը կամ հաշվետվությունը չպաշտպանելը կամ փորձառության պաշտպանությունից մինչև 60 միավոր գնահատական ստանալը.

5) վճարովի հիմունքներով սովորող ասպիրանտների և հայցորդների պարագայում՝ ուսման վարձը չվճարելը,

6) ասպիրանտների և հայցորդների այլ պարտականությունների չկատարելը:

82. Համալսարանից հեռացված ասպիրանտներն ու հայցորդները կարող են վերականգնվել առնվազն մեկ կիսամյակ հետո՝ միայն վճարովի հիմունքներով:

## 7. ԱՍՊԻՐԱՆՏԻ/ՀԱՅՑՈՐԴԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

83. Համալսարանում հետբուհական կրթության երրորդ աստիճանի կրթական ծրագրով ընդունված և ուսումնառող ասպիրանտներն ու հայցորդները իրավունք ունեն.

1) առաջադրելու ատենախոսության թեմա.

2) տեղեկացված լինելու գիտելիքի ստուգման և գնահատման սկզբունքներին, կանոններին և կառուցակարգերին.

3) անվճար օգտվելու համալսարանի գրադարանից, ընթերցասրահներից, լաբորատորիաներից, տեղեկատվական պահոցներից, ուսումնական, գիտական, բուժական այլ ստորաբաժանումների ծառայությունից.

4) մասնակցելու համալսարանի և ամբիոնի գիտահետազոտական աշխատանքներին, կազմակերպվող գիտաժողովներին, սեմինարներին, կլոր սեղաններին և այլն.

5) մասնակցելու ներբուհական, հանրապետական և միջազգային դրամաշնորհային ծրագրերի.

6) բողոքարկելու համալսարանի ղեկավարության՝ ուսումնական գործընթացին վերաբերող հրամաններն ու կարգադրությունները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով.

7) ծանոթանալու համալսարանի կանոնադրությանը և այլ նորմատիվ փաստաթղթերի.

8) Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան, անհրաժեշտության դեպքում, ստանալ ակադեմիական արձակուրդ մինչև մեկ տարի ժամկետով.

9) դադարեցնել ուսումնառությունը և զորակոչվել պարտադիր ժամկետային զինվորական ծառայության, իսկ զորացրվելուց հետո ներկայացնել դիմում ասպիրանտի կամ հայցորդի իրավունքները վերականգնելու համար.

10) ուսումնական տարվա ընթացքում մեկ անգամ գտնվել երկամսյա արձակուրդում՝ կրթաթոշակի պահպանմամբ.

11) Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան տեղափոխվել մեկ այլ բարձրագույն ուսումնական հաստատություն՝ ներառյալ օտարերկրյա պետությունների բարձրագույն ուսումնական հաստատություններ.

12) Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և միջազգային շարժունության ծրագրերին համապատասխան ուսանելու բարձրագույն ուսումնական այլ հաստատություններում.

13) ուսումնառությունը դադարեցրած նախկին ասպիրանտը կամ հայցորդը, անկախ դադարեցման պատճառից, վերականգնելու իր ուսանողական իրավունքները.

14) հրամանագրվելուց հետո անվճար ստանալ համալսարանի նույնականացման քարտ, որն ապահովում է ազատ մուտքը համալսարանի տարածք և թույլ է տալիս օգտվելու գրադարանի և այլ ծառայություններից: Համալսարանի նույնականացման քարտը կորցնելու կամ վնասելու դեպքում տրվում է նոր քարտ՝ վճարովի հիմունքներով:

84. Համալսարանում ուսումնառող ասպիրանտներն ու հայցորդություն ձևակերպած հայցորդները պարտավոր են.

1) համալսարանի հետ կնքել պայմանագիր.

2) սահմանված ժամկետում կատարել ասպիրանտի և (կամ) հայցորդի անհատական աշխատանքային պլանով նախատեսված բոլոր առաջադրանքները.

3) տիրապետել կրթական ծրագրի վերջնարդյունքներով նախատեսված գիտելիքին, կարողություններին և հմտություններին.

4) կատարել համալսարանի ներքին կարգապահական կանոնների և ներքին իրավական ակտերի պահանջները.

5) հաճախել դասախոսություններին, գործնական, սեմինար, լաբորատոր պարապմունքներին և մասնակցել գիտահետազոտական փորձառությանը.

6) կատարել կրթական ծրագրում և դրա առանձին բաղադրիչների ծրագրերում ուսումնառությանը ներկայացվող պահանջները.

7) կրթական ծրագրի հետազոտական բաղադրիչները կատարելիս պահպանել համալսարանում գործող կարգերում հետազոտական էթիկային, բարեվարքությանը և ակադեմիական ազնվությանը ներկայացվող պահանջները.

8) պահպանել հասարակական համակեցության և բարոյականության նորմերը.

9) խնամքով վերաբերվել համալսարանի գույքին և այլ սեփականությանը:

85. Վճարովի ուսուցման համակարգում ուսումնառող ասպիրանտներն ու հայցորդները պարտավոր են վճարել յուրաքանչյուր կիսամյակի սահմանված ուսման վարձը պայմանագրով նախատեսված ժամկետներում:

86. Ուսման վարձի վճարման պարբերականությունը ասպիրանտը կամ հայցորդը կարող է որոշել ինքնուրույն՝ ամբողջությամբ կիսամյակի սկզբում կամ ամսական պարբերականությամբ: Ամսական սկզբունքով ուսման վարձը վճարվում է յուրաքանչյուր ամիս:

87. Մեկ ուսումնական տարվա համար սահմանված ուսման վարձը չվճարած ասպիրանտը/հայցորդը հեռացվում է համալսարանից:

88. Ուսման վարձը ենթակա չէ փոփոխության ուսումնառության պայմանագրով նախատեսված ողջ ժամանակահատվածի համար:

89. Ասպիրանտի և հայցորդի հեռացման/ազատման դեպքում վճարված ուսման վարձը ենթակա չէ վերադարձման:

90. Եթե վճարովի հիմունքներով ուսումնառող ասպիրանտը կամ հայցորդը հեռացվել է ուսման վարձը չվճարելու պատճառով, ապա վերականգնման ժամանակ նախքան հրամանագրումը, պարտավոր է վճարել նախկինում հաշվեգրված պարտքը և տվյալ կիսամյակի կամ ամսվա համար նախատեսված ուսման վարձը:

91. Ուսման վարձը վճարվում է փոխանցման կարգով՝ կենտրոնական գանձապետարանում բացված համալսարանի գանձապետական հաշվին:

Հավելված N 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հայաստանի
պետական տնտեսագիտական համալսարանի
ռեկտոր, տնտեսագիտության դոկտոր,
պրոֆեսոր Դ. Ռ. Գալոյանին

______________________________

______________________ համալսարանի

______________________ ֆակուլտետի

__________ թվականի մագիստրատուրայի շրջանավարտ

______________________ -ից

անուն, հայրանուն, ազգանուն

հասցե՝ ______________________

______________________________

հեռ. (բն.) ____________ (բջջ.) ____________

**ԴԻՄՈՒՄ**

Խնդրում եմ թույլատրել մասնակցելու 20 ____ - 20 ____ ուսումնական տարվա առկա ուսուցման ասպիրանտուրայի ընդունելության

______________________________________________

մասնագիտական քննությանը՝ ըստ հետևյալ առաջնահերթության.

1) անվճար հիմունքներով,
2) վճարովի հիմունքներով:

Կից ներկայացնում եմ

______________________________________________

______________________________________________

վերնագրով ռեֆերատ/հոդված (ընդգծել):

Դիմող՝ ____________________ ____________________

ստորագրություն անուն, ազգանուն

« ____ » ______________ 20 ____ թ.

Հայաստանի
պետական տնտեսագիտական համալսարանի
ռեկտոր, տնտեսագիտության դոկտոր,
պրոֆեսոր Դ. Ռ. Գալոյանին

_______________________________________________

______________________________________ համալսարանի

_______________________________________ ֆակուլտետի

___________ թվականի մագիստրատուրայի շրջանավարտ

___________________________________________ -ից

անուն, հայրանուն, ազգանուն

հասցե՝ ______________________________________

_______________________________________________

հեռ. (բն.) _________________ (բջջ.) __________________

**ԴԻՄՈՒՄ**

Խնդրում եմ թույլատրել ինձ ձևակերպվել 20 _____ - 20 _____ ուսումնական տարում որպես հայցորդ

_______________________________________________________________

_______________________________________________________________

(մասնագիտության և ամբիոնի անվանումը)

Կից ներկայացնում եմ

_______________________________________________________________

_______________________________________________________________

վերնագրով ռեֆերատ/հոդված (ընդգծել):

Դիմող՝ ____________________ ____________________________

ստորագրություն անուն, ազգանուն

« _____ » __________________ 20 ______ թ.

Հավելված N 2

**ՑՈՒՑԱԿ**
**հրատարակված գիտական աշխատանքների**

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի

____________________________________________________

____________________________________________________

(ստորաբաժանումը, մասնագիտությունը)

____________________________________________

(դիմորդի անունը, հայրանունը, ազգանունը)

| **N** | **Անվանումը** | **Բնույթը** | **Ելքային տվյալները** | **Ծավալը** | **Համա-հեղինակները** |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1. | | | | | |
| 2. | | | | | |
| 3. | | | | | |
| 4. | | | | | |
| 5. | | | | | |
| 6. | | | | | |

**Հաստատում եմ՝**

**Գիտական քարտուղար**

Հավելված N 3

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄ • ՓՈՐՁ • ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

# ՌԵՖԵՐԱՏ

**Թեմա՝**

**Մասնագիտության դասիչ՝**

**Մասնագիտություն՝**

**Ամբիոն՝**

**Կատարող՝**

**Երևան 20 ______**

Հավելված N 4

## ՀՊՏՀ ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ/ՀԱՅՑՈՐԴՈՒԹՅԱՆ ՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՌԵՖԵՐԱՏԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ

Գիտական ռեֆերատ ներկայացվում է ՀՊՏՀ ասպիրանտուրա դիմելու և հայցորդություն ձևակերպելու համար: Գիտական ռեֆերատը տրամաբանական կառուցվածք ունեցող ամբողջական, ինքնուրույն, ավարտուն հետազոտություն է, որը փաստում է հեղինակի ինքնուրույն հետազոտություն իրականացնելու կարողությունն ու մասնագիտական պատրաստվածությունը: Գիտական ռեֆերատը պետք է ունենա առավելապես **վերլուծական բնույթ**:

Ռեֆերատը պետք է շարադրված լինի տպագիր: **Աշխատանքի ծավալը՝** նվազագույնը **20** էջ:

Դիմորդի կողմից փաստաթղթերի ներկայացման ժամանակ տրամադրվում է ռեֆերատի տպագիր տարբերակը, որից հետո aspirantura@asue.am կամ aspirantura.phd@outlook.com էլեկտրոնային հասցեին ուղարկվում է նաև էլեկտրոնային (PDF ֆորմատով) տարբերակը:

**Ռեֆերատի** մեջ այլ աղբյուրներից տեքստերի, դրանց առանձին մասերի (մտքի, ձևակերպման, բնորոշման, բանաձևերի, տվյալների, աղյուսակների, գծապատկերների, այլ տարրերի) օգտագործման դեպքում սկզբնաղբյուրին հղումը **պարտադիր է**: Առանց աշխատությանը կամ սկզբնաղբյուրին պատշաճ հղման, այլոց հետազոտությունների արդյունքները, ներառյալ՝ ընդհանրացումները, եզրահանգումները, պնդումները, առաջադրած գաղափարներն ու թեզերը, արտահայտած մտքերը որպես սեփական աշխատանքի արդյունք ներկայացնելը համարվում է **գրագողություն**:

**Մեջբերումները, հղումներն ու ծանոթագրությունները** պետք է նշվեն յուրաքանչյուր էջի տողատակում (ներառելով հեղինակի ազգանունը և անունը կամ հրապարակող կազմակերպության ամբողջական անվանումը), աշխատության անվանումը, հրատարակման վայրը, հրատարակչությունը, տարեթիվը, էջը (էջերը): Էլեկտրոնային նյութերից մեջբերումներ կատարելիս հարկավոր է մատնանշել ոչ միայն տվյալ կայքի ամբողջական հասցեն, այլև այն էջը (համարակալման պարագայում), որից կատարվել է մեջբերումը կամ հղումը և մուտքի օրը:

Ներկայացված ռեֆերատի **ինքնատիպության աստիճանը** ստուգվում է ՀՊՏՀ հակագրագողության համակարգում՝ նախքան մասնագիտական ամբիոն գրախոսման ուղարկելը:

Պատշաճ հղումներով, սակայն **80%-ից** ցածր ինքնատիպության աստիճան կամ ռեֆերատի ընդհանուր բառաքանակում ընդամենը մեկ գրականության աղբյուրին **2%-ը** գերազանցող համընկնում ունեցող (առանց գրականության ցանկի) ռեֆերատները չեն բավարարում պահանջներին և չեն ընդունվում:

Գիտական ռեֆերատի կառուցվածքի հիմնական մասերն են.

- **Տիտղոսաթերթ:**
- **Համառոտագիր (Abstract):** Համառոտագիրն աշխատանքի ընդհանրական ամփոփումն է, որն ի մի է բերում իրականացված հետազոտությունը և շաղկապում դրա առանձին բաժինները: Այն ներկայացնում է հետազոտության հիմնական բովանդակությունը և ստացված արդյունքները: Համառոտագրում աղյուսակներ և գծապատկերներ չեն օգտագործվում, հղումներ չեն տրվում:
- **Ներածություն:** Այս բաժնում հիմնավորվում է հետազոտության արդիականությունը, նպատակը և խնդիրները, ազդեցության շրջանակը, լուծման ուղիների և մեթոդների կիրառման նպատակահարմարությունը, ինչպես նաև ակնկալվող արդյունքը, վարկածների առաջադրումն ու դրանց ստուգման ուղիների հակիրճ և հստակ նկարագրությունը: Ներածությունը պետք է արտահայտի թեմայի կիրառական նշանակությունը՝ ունենալով մեթոդաբանական և տեսական հենք:
- **Գրականության ակնարկ (Literature Review):** Գրականության ակնարկը հետազոտության թեմայի վերաբերյալ գիտական գրականության ուսումնասիրությունն է և հետազոտության շրջանակներում արծարծված խնդիրների լուծման ուղղությամբ այլ հետազոտողների կողմից մինչ այդ իրականացված վերլուծությունների ընդհանրացումը (հետազոտություններ, հոդվածներ, հրապարակումներ, թեզեր, մենագրություններ և այլն):
- **Հետազոտության մեթոդաբանություն** բաժնում համառոտ կերպով նկարագրվում են ինչպես հետազոտության իրականացման գիտականորեն հիմնավորված և լայն կիրառություն ունեցող, այնպես էլ հեղինակի կողմից առաջարկված սեփական մեթոդաբանությունը, եթե այդպիսին առկա է:
- **Վերլուծություն և արդյունքներ (Analysis and Findings)** բաժնում իրականացվում է հետազոտության օբյեկտի համակողմանի վերլուծություն, բացահայտվում են օբյեկտի օրինաչափությունները, փոփոխության միտումները, զարգացման ուղղությունները, խոչընդոտները և այլն, որոնք ամփոփվում են հետազոտության տեսական և (կամ) կիրառական արդյունքների տեսքով: Համապարփակ վերլուծությանը հաջորդում է իրականացված հետազոտության արդյունքների ու բացահայտումների նկարագրությունը: Ցանկալի է ստացված արդյունքների ներկայացումը գծապատկերների, աղյուսակների, գրաֆիկների և սխեմաների կիրառմամբ:
- **Եզրակացությունը** հետազոտական աշխատանքի ամփոփիչ բաժինն է, որտեղ շեշտադրվում է ներածությունում նշված խնդիրների լուծումները: Խորհուրդ է տրվում կրկին անդրադառնալ հետազոտության իրականացման նպատակին, արդիականությանը, առաջադրված խնդրին և վարկածներին՝ ստացված արդյունքի հետ դրանք համադրելու նպատակով: Եզրակացության մեջ պետք է համառոտ և հստակ ամփոփել հետազոտական աշխատանքի

բացահայտումները, որոնք մինչ հետազոտության իրականացումն անհասանելի էին ընթերցողների համար, ինչպես նաև ներկայացնել, թե հետազոտության արդյունքները որքանով են լրացնում առկա գրականության բացթողումները և այլ հարակից ինչպիսի խնդիրների կարող են լուծում տալ: Եզրակացության մեջ ընդգծվում է հետազոտության խնդրի/վարկածի հաստատումը կամ հերքումը, քննարկվում արդյունքի նշանակալիությունը, ցույց տրվում, թե հետազոտողը պատասխանել է առաջադրված հարցերին և ստուգել իր կողմից առաջ քաշված վարկածները:

- **Գրականության ցանկն** ամփոփում է հետազոտության ընթացքում օգտագործված գրականությունը: Օգտագործված գրականությունը տրվում է նաև հիմնական տեքստում՝ հղումների տեսքով: Աղբյուրները բերվում են բնօրինակի լեզվով: Նույն հեղինակի աշխատանքները պետք է դասավորել ըստ տարեթվերի աճման կարգի կամ ըստ շարադրանքի մեջ հղումների հերթականության: Պետք է գրել աշխատանքի լրիվ անվանումը, դնել բաժանիչ՝ // նշանը, հրատարակչությունը, հրատարակման տեղը, տարեթիվը, էջերի ընդհանուր թիվը:

**Տեխնիկական պահանջներ**

A4 ֆորմատի թղթի համակարգչային շարվածքով հայերեն շարադրանք (վերևից՝ 2 սմ, ներքևից՝ 2.5 սմ, ձախից՝ 3 սմ, աջից՝ 1.5 սմ, տառատեսակ՝ GHEA Grapalat, տառաչափ՝ 12, միջտողային տարածությունը՝ 1.5 սմ):

Հավելված N 5

Հայաստանի
պետական տնտեսագիտական համալսարանի
ռեկտոր, տնտեսագիտության դոկտոր,
պրոֆեսոր Դ. Ռ. Գալոյանին

______________________________________________
______________________________________________ ամբիոնի
__________ տարվա ______________________________ ուսուցման
(առկա, հեռակա)

ասպիրանտ (հայցորդ) ______________________________
______________________________________________ -ից
անուն, հայրանուն, ազգանուն

հասցե՝ ______________________________________________
______________________________________________
հեռ. (բն.) ______________________ (բջջ.) ____________________

**ԴԻՄՈՒՄ**

Խնդրում եմ թույլատրել ինձ մասնակցել 20 _____ - 20 _____ ուսումնական տարվա գարնանային/աշնանային քննաշրջանի

______________________________________________________________________
(մասնագիտության թվանիշը և անվանումը)
______________________________________________________________________

մասնագիտությամբ որակավորման քննությանը:

Դիմող՝ ______________________ ______________________________
ստորագրություն անուն, ազգանուն

« _____ » ____________________ 20 ______ թ.

Հավելված N 6

## ԱՍՊԻՐԱՆՏԻ/ՀԱՅՑՈՐԴԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՍՏՈՒԳԱՐՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿ

| ԱՎԱՆԴԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ | ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ 100 ՄԻԱՎՈՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ | ԳՆԱՀԱՏԱԿԱՆԻ ՏԱՌԱՅԻՆ ՆԻՇԸ |
|---|---|---|
| գերազանց | 97-100 | A+ |
| գերազանց | 93-96 | A |
| գերազանց | 89-92 | A- |
| լավ | 85-88 | B+ |
| լավ | 81-84 | B |
| լավ | 77-80 | B- |
| բավարար | 73-76 | C+ |
| բավարար | 69-72 | C |
| բավարար | 60-68 | C- |
| անբավարար | փոքր է 60-ից (առանց կլորացման) | D |

Հավելված N 7

## ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅՈՒՄ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՌՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Կրեդիտը՝ 10

Ուսումնառության ժամկետ՝ 20 _____ - 20 _____ թթ.

Մասնագիտություն՝ ______________________________

Ամբիոն՝ __________________________________________

Փորձառության սկիզբ՝ _____________ թ.

Փորձառության ավարտ՝ _____________ թ.

Փորձառության պաշտպանության օր՝ ____________ թ.

| N | Ազգանուն, անուն, հայրանուն | Փորձառության հաշվետվության պաշտպանություն (0-100) | Տառանիշը | Հանձնաժողովի նախագահի և անդամների ստորագրությունը |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| | | | | |
| | | | | |

**Ասպիրանտուրայի բաժնի պետ՝**

Հավելված N 8

# ՑԱՆԿ
# ՀՊՏՀ ԱՍՊԻՐԱՆՏՆԵՐԻՆ/ՀԱՅՑՈՐԴՆԵՐԻՆ ԱՌԱՋԱԴՐՎՈՂ ԸՆՏՐՈՎԻ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ

## Մասնագիտական ընտրովի դասընթացներ

| Ամբիոն | Մասնագիտության դասիչ | Առարկայի անվանում | Կրեդիտ |
|---|---|---|---|
| Տնտեսագիտության տեսություն | ԸԴ.01 | Ցանցային տնտեսության և էլեկտրոնային բիզնեսի զարգացման հիմնախնդիրները ՀՀ-ում | 3 |
| | | Սոցիալական կապիտալի տեսություն | 3 |
| | ԸԴ.02 | Էվոլյուցիոն տնտեսագիտություն | 3 |
| | | Ճյուղային շուկաների տեսություն և մրցակցային գաղափարներ | 3 |
| | ԸԴ.04 | Վարքագծային տնտեսագիտություն | 3 |
| | | Տնտեսության պետական հատվածի ժամանակակից հիմնախնդիրները | 3 |
| Կառավարում | ԸԴ.01 | Նորամուծական տնտեսության կառավարման հիմնախնդիրները | 3 |
| | | Ռազմավարական կառավարման արդի հիմնախնդիրները | 3 |
| | ԸԴ.02 | Բանկային մենեջմենթի արդի հիմնահարցեր | 3 |
| | | Առաջնորդման ժամանակակից տեսություններ | 3 |
| | ԸԴ.04 | Արտադրության կառավարման արդի հիմնախնդիրները | 3 |

| | | | |
|---|---|---|---|
| | | Կոնֆլիկտների կառավարման արդի հիմնախնդիրները | 3 |
| Բիզնես վարչարարություն | ԸԴ.01 | Աշխատանքի շուկայի կարգավորման ժամանակակից հիմնախնդիրները | 3 |
| | | Անձնակազմի տնտեսագիտության արդի հիմնահարցերը | 3 |
| | ԸԴ.02 | Բիզնես մոդելների ձևավորման հիմնախնդիրները | 3 |
| | | Վենչուրային բիզնեսի զարգացման հեռանկարները | 3 |
| | ԸԴ.04 | Բիզնես ռիսկերի բացահայտման հիմնահարցերը | 3 |
| | | Բիզնեսի աճի հնարավորությունները ժամանակակից պայմաններում | 3 |
| Մակրոէկոնոմիկա | ԸԴ.01 | Տնտեսական աճ և զարգացում | 3 |
| | | Մակրոտնտեսական կանխատեսման հիմնախնդիրները | 3 |
| | ԸԴ.02 | Հարկաբյուջետային քաղաքականության ժամանակակից հիմնախնդիրները | 3 |
| | | Տնտեսության ճյուղերի զարգացում | 3 |
| | ԸԴ.04 | Մակրոտնտեսական հավասարակշռություն | 3 |
| | | Արժութային քաղաքականությունը զարգացած և զարգացող երկրներում | 3 |
| Միկրոէկոնոմիկա | ԸԴ.01 | Բնական մենաշնորհների պետական կարգավորում | 3 |

| | | | |
|---|---|---|---|
| | | Հանրային ծառայությունների բիզնես | 3 |
| | ԸԴ.02 | Ներդրումային քաղաքականություն | 3 |
| | | Արդյունաբերական քաղաքականություն | 3 |
| | ԸԴ.04 | Արդյունաբերական և էներգետիկ ոլորտի ձեռնարկությունների գործունեության կազմակերպման և կառավարման հիմնախնդիրները | 3 |
| | | Ձեռնարկությունների մաքսային և հարկային հարաբերությունների կազմակերպման ժամանակակից հիմնախնդիրները | 3 |
| Մարքեթինգ | ԸԴ.01 | Մարքեթինգի արդյունավետության գնահատման հիմնախնդիրները | 3 |
| | | Կազմակերպության վարքագիծ | 3 |
| | ԸԴ.02 | Ռազմավարական վերլուծություն | 3 |
| | | Շուկայի վերլուծություն և կանխատեսում | 3 |
| | ԸԴ.04 | Սպառողական արժեքի կառավարում | 3 |
| | | Մատակարարումների շղթայի կառավարում | 3 |
| Բնօգտագործման տնտեսագիտություն | ԸԴ.01 | Շրջակա միջավայրի վրա ազդեցության տնտեսական վերլուծություն | 3 |

| | | | |
|---|---|---|---|
| | | Էկոլոգիական վարքագծի վերլուծություն | 3 |
| | ԸԴ.02 | Էկոլոգիական գործարարության զարգացման ուղղությունները | 3 |
| | | Կայուն զարգացման էկոլոգիական սկզբունքները | 3 |
| | ԸԴ.04 | Շրջակա միջավայրի որակ և տնտեսական բարեկեցության չափումները | 3 |
| | | Էկոլոգիական մենեջմենթ | 3 |
| Ֆինանսներ | ԸԴ.01 | Կապիտալի ներգրավման ժամանակակից կառուցակարգերը և ֆինանսական գործիքները | 3 |
| | | Կապիտալի կառուցվածք և կորպորատիվ կառավարում | 3 |
| | ԸԴ.02 | Ակտիվների արժեթղթավորում և ֆինանսական ինժեներինգ | 3 |
| | | Ֆինանսական շուկայի ենթակառուցվածքների զարգացում և ֆինանսական ներգրավվածություն | 3 |
| | ԸԴ.04 | Պետական պարտքի կառավարման ֆինանսական կառուցակարգեր և գործիքներ | 3 |
| | | Ֆինանսական կառավարման կառուցակարգերը և գործիքները պետական ֆինանսների համակարգում | 3 |
| Բանկային գործ և ապահովագրություն | ԸԴ.01 | Բանկային գործունեության կարգավորում | 3 |
| | | Առևտրային բանկերի, ապահովագրական ընկերությունների ակտիվների և պասիվների կառավարման հիմնախնդիրները | 3 |

| | | | |
|---|---|---|---|
| | ԸԴ.02 | Վճարահաշվարկային ծառայությունները առևտրային բանկերում | 3 |
| | | Օպտիմալ որոշումների ընդունման մեթոդները բանկային և ապահովագրական ոլորտներում | 3 |
| | ԸԴ.04 | Բանկային գործունեության նորմատիվային կարգավորումը ՀՀ-ում | 3 |
| | | Ֆինանսական կայունության գնահատումը բանկային համակարգում | 3 |
| Կառավարչական հաշվառում և աուդիտ | ԸԴ.01 | Կառավարչական հաշվառման և վերլուծության արդի հիմնախնդիրներ | 3 |
| | | Աուդիտի արդի հիմնախնդիրներ | 3 |
| | ԸԴ.02 | Ֆինանսական վերլուծության հիմնախնդիրներ | 3 |
| | | Ֆինանսական ենթակառուցվածքների աուդիտ | 3 |
| | ԸԴ.04 | Կառավարչական աուդիտ | 3 |
| | | Գործառնական աուդիտ | 3 |
| Ֆինանսական հաշվառում | ԸԴ.01 | Ֆինանսական ինստիտուտներում հաշվառման և հաշվետվության հիմնախնդիրները | 3 |
| | | ՖՀՄՍ-ների կիրառման առանձնահատկությունները ֆինանսական ինստիտուտներում | 3 |

| | | | |
|---|---|---|---|
| | ԸԴ.02 | Միջին և խոշոր գործարարության հարկային հաշվառման հիմնախնդիրները | 3 |
| | | Ֆինանսական հաշվետվությունների վերլուծության առանձնահատկությունները | 3 |
| | ԸԴ.04 | Երկարաժամկետ կապիտալ ակտիվների գնահատման արդի մոտեցումները | 3 |
| | | Խմբային հաշվառման հիմնախնդիրները համաձայն ՖՀՄՍ-ների | 3 |
| Վիճակագրություն | ԸԴ.01 | Տնտեսական ռիսկերի վիճակագրական վերլուծության մեթոդները և դրանց կիրառությունը | 3 |
| | | Պատահական գործընթացների վիճակագրական վերլուծության մեթոդները և դրանց կիրառությունը | 3 |
| | ԸԴ.02 | Բիզնես գործընթացների վիճակագրական վերլուծության և կանխատեսման արդի հիմնախնդիրները | 3 |
| | | Ոչ թվային տեղեկատվության վիճակագրական վերլուծության արդի հիմնախնդիրները | 3 |
| | ԸԴ.04 | Բազմաչափ վերլուծություններում օբյեկտների դասակարգման կլաստերային վերլուծությունը | 3 |
| | | Բազմաչափ վիճակագրական մեթոդների կիրառման հիմնախնդիրները | 3 |

| | | | |
|---|---|---|---|
| Միջազգային տնտեսական հարաբերություններ | ԸԴ.01 | Միջազգային մակրոտնտեսագիտություն | 3 |
| | | Գեոէկոնոմիկա | 3 |
| | ԸԴ.02 | Միջազգային առևտուր և ինտեգրում | 3 |
| | | Տարածաշրջանային տնտեսական քաղաքականություն | 3 |
| | ԸԴ.04 | Միջազգային ֆինանսներ | 3 |
| | | Արժութային գործառնություններ և արժութային կարգավորում | 3 |
| Տնտեսամաթեմատիկական մեթոդներ | ԸԴ.01 | Ժամանակային շարքերի վերլուծություն | 3 |
| | | Տնտեսության քլաստերային և գործոնային վերլուծություն | 3 |
| | ԸԴ.02 | Տնտեսության մոդելավորումը Բայեսյան վիճակագրության մեթոդներով | 3 |
| | | Ժամանակային շարքերի կանխատեսումային մեթոդներ | 3 |
| | ԸԴ.04 | Տվյալների վիզուալիզացիա | 3 |
| | | Մեքենայական ուսուցում տնտեսագետների համար | 3 |
| Տնտեսական ինֆորմատիկա և տեղեկատվական համակարգեր | ԸԴ.01 | Արհեստական բանականության և մեքենայական ուսուցման հիմունքներ | 3 |
| | | Նեյրոնային ցանցեր և խորը ուսուցում | 3 |
| | ԸԴ.02 | Լայնամասշտաբ վերլուծություն (Large-scale Analytics) | 3 |
| | | Համակարգչագիտություն և ծրագրավորման կիրառությունները տվյալագիտությունում | 3 |

| | | | |
|---|---|---|---|
| | ԸԴ.04 | Ամպային համակարգերի կառավարում և տեղեկատվական անվտանգություն | 3 |
| | | Որոշումների աջակցման համակարգերը բիզնեսում | 3 |

## Համալսարանական ընտրովի դասընթացներ

| Սպասարկող ամբիոն | Մասնագիտության դասիչ | Առարկայի անվանում | Կրեդիտ |
|---|---|---|---|
| Մակրոէկոնոմիկա | ԸԴ.03 | Հրապարակումների միջազգային գիտաչափական տվյալների բազա | 4 |
| Հասարակագիտություն | | Գիտության փիլիսոփայություն | |
| Հասարակագիտություն | ԸԴ.05 | Բարձրագույն դպրոցի մանկավարժություն | 3 |
| Հասարակագիտություն | | Կրթության հոգեբանություն | |
| Տնտեսամաթեմատիկական մեթոդներ | ԸԴ.06 | Հետազոտության քանակական մեթոդներ | 4 |
| Մարքեթինգ | | Գիտական արդյունքի առևտրայնացում | 4 |

Հավելված N 9

**ՊԱՅՄԱՆԱԳԻՐ №**

ասպիրանտուրայում _______________ հիմունքներով ուսումնառության

ք. Երևան «____»__________________ 20____ թ.

Բարձրագույն և հետբուհական կրթություն իրականացնող «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ Համալսարան), ի դեմս ղեկավարի՝ ռեկտոր ________________________________ մի կողմից, և ասպիրանտուրայի ուսումնառող՝ (այսուհետ՝ ուսումնառող) ________________________________________ մյուս կողմից, ովքեր ստորև հիշատակվում են որպես «կողմ» և միասին՝ որպես «կողմեր», կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի իրավական հիմքերը

Սույն պայմանագրի իրավական հիմքերն են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրությունը, կրթության ոլորտը կարգավորող իրավական ակտերն ու «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքները, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի փետրվարի 25-ի N 238-Ն, 2007 թվականի ապրիլի 26-ի N 581-Ն, 2018 թվականի ապրիլի 12-ի N 451-Ն որոշումները, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի կանոնադրությունը և Հայաստանի Հանրապետության այլ իրավական ակտեր:

2. Պայմանագրի առարկան

Սույն պայմանագրի առարկան առկա/հեռակա անվճար/վճարովի ուսուցմամբ՝ _____ տարի ժամկետով, հետբուհական կրթության երրորդ աստիճանի կրթական ծրագրով Համալսարանում ուսումնառության իրականացման ակադեմիական և ֆինանսական կարգն ու պայմաններն են:

3. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

3.1. Համալսարանը պարտավոր է՝

3.1.1. մրցույթի արդյունքում ընդունված դիմորդին Համալսարանի ռեկտորի հրամանով հրամանագրել __________________ ամբիոնում, որպես առկա/հեռակա, անվճար/վճարովի ուսումնառող ասպիրանտ,

3.1.2. ուսումնառողի հրամանագրումից հետո սահմանված կարգով հաստատել ասպիրանտի ատենախոսության թեմա և գիտական ղեկավար,

3.1.3. ասպիրանտուրայում ուսումնառության ամբողջ ժամանակահատվածի համար՝ սահմանված կարգով հաստատել ասպիրանտի անհատական աշխատանքային պլան,

3.1.4. ապահովել ասպիրանտի ուսումնառությունը Համալսարանի գիտական խորհրդի կողմից հաստատված անհատական աշխատանքային պլանի համաձայն,

3.1.5. ծանոթացնել ուսումնառողին Համալսարանի ասպիրանտուրայի ընդունելության և ուսումնառության, հայցորդության ձևակերպման կարգին, պայմաններին և ժամկետներին,

3.1.6. ասպիրանտուրայում ուսումնառության տարիներին ստեղծել ուսումնառողի գիտակրթական գործընթացն ապահովող անհրաժեշտ պայմանները,

3.1.7. անհատական աշխատանքային պլանին համապատասխան, ամբիոն ներկայացված հաշվետվության հիման վրա, յուրաքանչյուր տարի ատեստավորել ասպիրանտին,

3.1.8. առկա ուսուցմամբ ուսումնառողին տարեկան մեկ անգամ՝ ուսումնական տարվա վերջին տրամադրել երկամսյա արձակուրդ, անվճար ուսումնառողների դեպքում՝ կրթաթոշակի պահպանմամբ,

3.1.9. պետական պատվերի շրջանակներում (անվճար) սովորող ասպիրանտին ուսումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում տեղավորել աշխատանքի համապատասխան մասնագիտությամբ՝ ասիստենտի կամ կրտսեր գիտական աշխատողի պաշտոնում՝ առնվազն 3 տարի ժամկետով:

3.2. Համալսարանն իրավունք ունի՝

3.2.1. ատեստավորում չանցած, վճարովի համակարգում սովորողների դեպքում՝ ուսման վարձը չվճարած և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում ուսումնառողին ռեկտորի հրամանով հեռացնել ասպիրանտուրայից,

3.2.2. ուսումնառողի համաձայնությամբ ուսումնական գործընթացը կազմակերպել առցանց կամ անցանց եղանակներով:

3.3. Ուսումնառողը պարտավոր է՝

3.3.1. ունենալ Համալսարանի գիտական խորհրդի կողմից հաստատված ասպիրանտի անհատական աշխատանքային պլան,

3.3.2. ասպիրանտի անհատական աշխատանքային պլանին համապատասխան՝ յուրաքանչյուր տարի ամբիոն ներկայացնել հաշվետվություն և ատեստավորվել,

3.3.3. հանձնել ասպիրանտի անհատական աշխատանքային պլանով նախատեսված քննությունները, այդ թվում նաև որակավորման մասնագիտական քննությունը, կուտակել համապատասխան կրեդիտներ, ավարտել ատենախոսությունը և համապատասխան ամբիոնում անցկացնել ատենախոսության նախնական քննարկում,

3.3.4. վճարովի ուսուցման համակարգում ուսումնառելու դեպքում պայմանագրով սահմանված ժամկետներում վճարել ուսման վարձը,

3.3.5. պահպանել Համալսարանի կանոնադրությունը և ներքին կարգապահական կանոնները,

3.3.6.խնամքով վերաբերվել Համալսարանի գույքին:

3.4. Ուսումնառողն իրավունք ունի՝

3.4.1. տեղեկացված լինել Համալսարանի կանոնադրությանը, ՀՊՏՀ-ում ասպիրանտուրայի ընդունելության, ուսումնառության և հայցորդության ձևակերպման կարգին և այլ նորմատիվ փաստաթղթերին,

3.4.2. գիտական հետազոտություններ կատարելիս՝ անվճար օգտվել գիտական, լաբորատորիաներից, համակարգչային տեխնիկայից, գրադարանից, գործուղումների իրավունքից, հանրակացարանից:

4. Ուսման վճարի չափը և վճարման կարգը

4.1. Վճարովի հիմունքներով սովորող ասպիրանտի տարեկան ուսման վարձը սահմանվում է 500.000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:

4.2. Ուսումնառության ընթացքում ասպիրանտի ուսման վարձը փոփոխության ենթակա չէ:

4.3. Ուսման վարձի վճարումն իրականացվում է ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

4.4. Առաջին տարվա համար ՀՀ օրենսդրությանը համապատասխան վճարումը կատարվում է ասպիրանտի հրամանագրումից հետո՝ տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում:

4.5. Ասպիրանտուրայից ազատվելու/հեռացվելու դեպքում վճարված ուսման վարձը ենթակա չէ վերադարձման:

5. Պայմանագրի ուժի մեջ մտնելը և դրա գործողության ժամկետը

Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է հետազոտողի կրթական ծրագրով նախատեսված ամբողջ ժամանակահատվածի համար՝ բացառությամբ սույն պայմանագրի 6-րդ բաժնում նշված դեպքերի:

6. Պայմանագրի վաղաժամկետ լուծման հիմքերը

6.1. Սույն պայմանագիրը ենթակա է վաղաժամկետ լուծման՝

6.1.1. ուսումնառողի կողմից տարբեր պատճառներով Համալսարանում ասպիրանտուրայի գիտակրթական գործընթացի ընդհատման,

6.1.2. ասպիրանտի կողմից անհատական աշխատանքային պլանով նախատեսված աշխատանքերի չկատարման,

6.1.3. ասպիրանտի կողմից սույն պայմանագրով նախատեսված ֆինանսական պարտավորությունների և ժամկետների խախտման դեպքերում:

7. Եզրափակիչ դրույթներ

7.1. Սույն պայմանագիրը կազմված է երկու հավասարազոր օրինակից, որոնցից մեկական օրինակ ի պահ է հանձնված կողմերին:

7.2. Կողմերի միջև ծագած վեճերը կարգավորվում են փոխադարձ համաձայնությամբ կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

8. Կողմերի գտնվելու, բնակության վայրերը, ստորագրությունները և տվյալները

| Կազմակերպություն | Դիմորդ |
|---|---|
| «ՀՊՏՀ» ՊՈԱԿ<br>ք. Երևան, Նալբանդյան փ. 128<br>Թիվ 1 Գանձապետարան<br>հհ 900018001876<br>ՀՎ ՀՀ 01503224<br>Ռեկտոր՝ Դ. Ռ. Գալոյան | |
| ________________________________<br>(ստորագրություն) | ________________________________<br>(ստորագրություն) |
| Կ.Տ. Հայաստանի պետական<br>տնտեսագիտական համալսարան | |
| «_____» ____________________ 20 _____ թ. | «_____» ____________________ 20 _____ թ. |

Հավելված N 10

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ №

հայցորդության ձևակերպման

ք. Երևան «____» ______________________ 20____ թ.

Բարձրագույն և հետբուհական կրթություն իրականացնող «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ Համալսարան), ի դեմս ղեկավարի՝ ռեկտոր ______________________ մի կողմից, և հայցորդ (այսուհետ՝ հետազոտող) ______________________ մյուս կողմից, ովքեր ստորև հիշատակվում են որպես «կողմ» և միասին՝ որպես «կողմեր», կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի իրավական հիմքերը

Սույն պայմանագրի իրավական հիմքերն են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրությունը, կրթության ոլորտը կարգավորող իրավական ակտերը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի փետրվարի 25-ի N 238-Ն և 2010 թվականի հուլիսի 21-ի N 1167-Ն որոշումները, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի կանոնադրությունը և Հայաստանի Հանրապետության այլ իրավական ակտերը:

2. Պայմանագրի առարկան

Սույն պայմանագրի առարկան վճարովի ուսուցմամբ՝ մինչև 5 (հինգ) տարի ժամկետով, հետազոտողի կրթական ծրագրով Համալսարանում հայցորդության իրականացման ակադեմիական և ֆինանսական կարգն ու պայմաններն են:

3. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

3.1. Համալսարանը պարտավոր է՝

3.1.1. հրամանագրել հետազոտողին ________________ ամբիոնում՝ Համալսարանի գիտական խորհրդի կողմից ատենախոսության թեմայի ու գիտական ղեկավարի հաստատման հիման վրա,

3.1.2. ապահովել հետազոտողի ակադեմիական գործունեությունը Համալսարանի գիտական խորհրդի կողմից հաստատված անհատական աշխատանքային պլանի համաձայն,

3.1.3. ծանոթացնել հետազոտողին Համալսարանի ասպիրանտուրայի ընդունելության և ուսումնառության, հայցորդության ձևակերպման կարգին, պայմաններին և ժամկետներին,

3.1.4. սահմանված կարգով հաստատել հայցորդի անհատական աշխատանքային պլան,

3.1.5. ստեղծել հետազոտողի գիտակրթական գործընթացն ապահովող անհրաժեշտ պայմաններ,

3.1.6. անհատական աշխատանքային պլանին համապատասխան, ամբիոն ներկայացված հաշվետվության հիման վրա, յուրաքանչյուր տարի ատեստավորել հայցորդին:

3.2. Համալսարանն իրավունք ունի՝

3.2.1. ատեստավորում չանցած, ուսման վարձը չվճարած և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում հետազոտողին ռեկտորի հրամանով հեռացնել Համալսարանից:

3.2.2. հետազոտողի համաձայնությամբ ուսումնական գործընթացը կազմակերպել առցանց կամ անցանց եղանակներով:

3.3. Հետազոտողը պարտավոր է՝

3.3.1. համալսարանի գիտական խորհրդի հաստատմանը ներկայացնել հայցորդի անհատական աշխատանքային պլան,

3.3.2. հայցորդի անհատական աշխատանքային պլանին համապատասխան՝ յուրաքանչյուր տարի ամբիոն ներկայացնել հաշվետվություն և ատեստավորվել,

3.3.3. հանձնել հայցորդի անհատական աշխատանքային պլանով նախատեսված քննությունները, այդ թվում նաև որակավորման մասնագիտական քննությունը, կուտակել համապատասխան կրեդիտներ, ավարտել ատենախոսությունը և համապատասխան ամբիոնում անցկացնել ատենախոսության նախնական քննարկում,

3.3.4. պայմանագրով սահմանված ժամկետներում վճարել ուսման վարձը,

3.3.5. պահպանել Համալսարանի կանոնադրությունը և ներքին կարգապահական կանոնները,

3.3.6. խնամքով վերաբերվել Համալսարանի գույքին:

3.4. Հետազոտողն իրավունք ունի՝

3.4.1. տեղեկացված լինել Համալսարանի կանոնադրությանը, ՀՊՏՀ ասպիրանտուրայում և հայցորդությունում ուսումնառության, գիտելիքների գնահատման և վարչարարության կազմակերպման կարգին և այլ նորմատիվ փաստաթղթերին,

3.4.2. գիտական հետազոտություններ կատարելիս՝ համալսարանի աշխատողների հետ հավասարապես անվճար օգտվել գիտական սարքավորումներից, լաբորատորիաներից, համակարգչային տեխնիկայից, գրադարանից, գործուղումների իրավունքից, հանրակացարանից:

4. Ուսման վճարի չափը և վճարման կարգը

4.1. Հայցորդի տարեկան ուսման վարձը սահմանվում է 500.000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:

4.2. Հայցորդության ողջ ժամանակահատվածի ընթացքում հայցորդի ուսման վարձը փոփոխության ենթակա չէ:

4.3. Ուսման վարձի վճարումն իրականացվում է ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

4.4. Առաջին տարվա համար վճարումը կատարվում է հայցորդի հրամանագրումից հետո՝ տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում:

4.5. Հայցորդությունից ազատվելու/հեռացվելու դեպքում վճարված ուսման վարձը ենթակա չէ վերադարձման:

5. Պայմանագրի ուժի մեջ մտնելը և դրա գործողության ժամկետը

Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է հետազոտողի կրթական ծրագրով նախատեսված ամբողջ ժամանակահատվածի համար՝ բացառությամբ սույն պայմանագրի 6-րդ բաժնում նշված դեպքերի:

6. Պայմանագրի վաղաժամկետ լուծման հիմքերը

6.1. Սույն պայմանագիրը ենթակա է վաղաժամկետ լուծման՝

6.1.1. հետազոտողի կողմից տարբեր պատճառներով Համալսարանում գիտակրթական գործընթացի ընդհատման,

6.1.2. հայցորդի կողմից անհատական աշխատանքային պլանով նախատեսված աշխատանքերի չկատարման,

6.1.3. հայցորդի կողմից սույն պայմանագրով նախատեսված ֆինանսական պարտավորությունների և ժամկետների խախտման դեպքերում:

7. Եզրափակիչ դրույթներ

7.1. Սույն պայմանագիրը կազմված է երկու հավասարազոր օրինակից, որոնցից մեկական օրինակ ի պահ է հանձնված կողմերին:

7.2. Կողմերի միջև ծագած վեճերը կարգավորվում են փոխադարձ համաձայնությամբ կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

8. Կողմերի գտնվելու, բնակության վայրերը, ստորագրությունները և տվյալները

Կազմակերպություն

«ՀՊՏՀ» ՊՈԱԿ
ք. Երևան, Նալբանդյան փ. 128
Թիվ 1 Գանձապետարան
hh 900018001876
ՀՎ ՀՀ 01503224
Ռեկտոր՝ Դ. Ռ. Գալոյան

______________________
(ստորագրություն)

Կ.Տ. Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան

«____» ______________ 20 ____ թ.

Հետազոտող

______________________
(ստորագրություն)

«____» ______________ 20 ____ թ.